ԳԼՈՒԽ ՆԺԱ.

Եթէ կամաւորապէս մտցեն 'ի պաշտօնս զինուորութեան երիտասարդ և տղայս հայոց իբր զինսուն հազարս բարիոք լինի, եթէ ոչ տուն հայոց հանիցէ 'ի մէջ ամենայն գաւառէ և բնակութենէ աշխարհին հայոց վիճակաւ տղայս և երիտասարդս հինգ 'ի միոյ հարիւրէ, վասն պաշտօնի զինուորութեան եօթն ամ ժամանակաւ պահեսցէ ոճկաւն տանն հայոց կառավարելով ըստ Օրինօք, և յետ եօթն ամաց ազատ լինի դարձցի 'ի տուն և 'ի բնակութիւնս իւր։

ԳԼՈՒԽ ՆԺԲ.

Ամենայն ծննդոց կենդանեաց, անասնոց և անբանից ամենայն տարոյ ծնեցելոց, որում բոլոր աշխարհ ստանայ, 'ի նմանէ հատուցանէ տասանորդս։

ԳԼՈՒԽ ՆԺԳ.

Ամենայն սողնոց, թռչնոց, ծննդոց հատուցանել տասանորդս։

ԳԼՈՒԽ ՆԺԴ.

Ամենայն ծառոց, տնկոց, բուսոց բերմանէ տասանորդս։